

ՄԻԹՐԱՆԵ ԳԹԹԻ ԳՆՏՈՍՏԵՆՆԵՐԻՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԻՔԸ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ՀԱՏԱՌԱՇՈՒ ԵՐԲՈՐԴ

ԱՂԱՂԱՅԻՆ ԵՒ ԴԱՆԻՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ՄԵՍԵՆ ԵՐԳԻՐՈՐԴ

ԺԱՆՆԻՔԻՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

Գ.

ԺԱՆՆԻՔԻՆ ԵՒ ԴԱՆԻՆ

(ԵՐԱՆՆԻՔԻՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ)

V.

Դառնանք ժառանգական իրաւունքի մի այլ կողմին. ինչն եղանակով էր կատարուում ժառանգութեան բաժանումն եւ ինչն հետեււորներով էր զաւթանում իւր տէրերին: Կարող է պատահել, որ ժառանգութիւնն ըստ օրէնքի մի քանի անձերի պէտք է անցնի, ուստի հարց է ծագում. ինչպէս է դատաստանագիրքը այսպիսի դէպքերը կարգադրում: Եթէ քննելու քննել, թէ ինչպէս է Միթրան Գոշը տնօրինում ըստ բաժանողական արեւմտի, գոյքի ժառանգութեան ուղիք բաշխումն, կարելի է հետեւցնել, որ նրա ըմբռնումն ժառանգման ձեւի մասին իրատ նման է հին հռոմէական Universalisuccessionին, այսինքն գոյքը համարուում է մի ամբողջութիւն, իւր բոլոր իրաւունքներով ու պարտքերով եւ իրեն ապրիսի ամբողջութիւն անցնում է ժառանգներին: Իւրաքանչիւր ժառանգին ընկնելու է իսկապէս ամբողջ գոյքը: Եթէ ժառանգները մի քանի հոգի են, այն ժամանակ ամբողջ ստացուածքը բաժանուում է իդէալական մասերի (aliquoten) ըստ ժառանգողների թւին, եւ իւրաքանչիւր ժառանգը ընդունելու է իրեն յատկացուած ամբողջ մասը: Այդ նպատակով իւրաքանչիւր թողած ժառանգութիւնը վերածուում է փոքրի, այսինքն գնահատական մի արժէքի, որ դատաստանագրքի համաձայն կոչուում է քսէլէն, նման հռոմէական ասին: Այդ զահեկանը բաժանում է ինչպէս ասին: Այդ զահեկանը բաժանում էր 12 հաւասար մասերի, որոնք կոչուում էին քսէլէն կամ քսէլէն: Կար նաեւ մի շարք քսէլէն անունով, որ հաւասար էր 3 քարեհատի: Այս բաժանման համեմատ երեք իւրաքանչիւր ժառանգողն ստանում էր իւր մասն: Կի (II, մասի) յօդուածում Միթրան Գոշը մի առ մի թւում է զանազան զէպքեր,

որոցից է տալիս, թէ ինչպէս է հարկաւոր վարուել: Աւերորդ կը լինի այստեղ բոլորն ի միասին յիշել, բայց եւ այնպէս առաջ բերել քանի մի բնորոշ օրինակներ:

1. Եթէ հօր մահուանց յետոյ մեռւմ են ժառանգների որդի եւ չամուսնացած դուստր, այն ատեն $2\frac{1}{2}$ զանգ ստանում է որդին. նոյնքան էլ դուստրը եւ մնացած 1 զանգը՝ մայրը: Ուրեմն ամբողջ գումարը կանի 6 զանգ, որ կազմում է մի զահեկան, մի ամբողջ գոյք:

2. Եթէ մի եղբայր ինչ եւ քոյր անաւին (ամուսնացած) — կէս զահեկան եւ չորս գարի (ուրեմն $3\frac{1}{3}$ զանգ) եղբօրն լինի եւ զանգ եւ կէս եւ երկու գարի քուրին (այն է $1\frac{2}{3}$ զանգ, այսինքն կէսն այն բաժնի, որ ստանում է եղբայրը կամ չամուսնացած քոյրը) եւ զանգ ի ծննդն:

3. Իսկ եթէ վեց քոյր (ամուսնացած) եւ մի եղբայր ինչ — չորս ժառանգութիւնն բաժանելիք. երեք եղբայր, վեց քոյր լինի. հետեւապէս եղբայրը ստանում է $1\frac{1}{3}$ զանգ ($\frac{1}{3}$ զահեկան), իսկ իւրաքանչիւր քոյրը $\frac{2}{3}$ զանգ ($\frac{2}{3}$ զահեկան):

Բաժանման վերջին եղանակները ու շարքութեան անելով, տեսնում ենք, որ հօր մահուամբ ժառանգութեան մասը զատուում է մի համար, եթէ ի հարկ է վերջին կենդանի է. իսկ մնացածը բաժանուում է համահասարակ թուով ուղղակի ժառանգների թւին համեմատ, ըստ որում որդիներն ու չամուսնացած դուստրները հաւասար մասերի իրաւունք ունեն, իսկ պատկուած աղջիկները — չերկուսն մի եղբայր կայցի: Ինչ վերաբերում է այն զէպքերին, երբ ժառանգութիւնն անցնում է հօրեղբայրներին ու ագնատական գծով այլ ազգականներին, դատաստանագիրքը լուծելու է պահում, թէ ինչպէս է այստեղ «բաժանողական արեւմտ» գործադրուելու:

Ժառանգութեան բաժանման միջոցին ժառանգների վրայ որոշ պարտականութիւններն էր դրում, որոնք սրբութեամբ պէտք է ի կատար ածուին: Դատաստանագիրքը իրաւաւոր գրելու է «փոխ զնկերին յափշտակելով» եւ իւրաքանչիւր եղբայրների, ազգականների ու օտարների վերաբերմամբ ժառանգութեան հարցերում «իրաւամբ» վարուել (II, գլ. 42): Այնուհետեւ ժառանգների վրայ պարտ է դրում որոշ գումար հանել ընդհանուր ժառանգութիւնից մեկնողի հոգ ա յիշատակի համար, «նախ զպատշաճ որոշ նորա տալով»:

ինչպէս եւ մեծերոց ծախքերը (II, գլ. 21, 47):
Հոգու յիշատակի եւ այլ այսպիսի եկեղեցական
պէտքերի համար (μνημόσυνα) ժառանգական
իրաւունքի մէջ սահմանած յատուկ օրինական
որոշումներ խիստ զարգացած էին ընդհանրական
իրաւունքում: Ի վերջոյ, ինչպէս արդէն յայտնի
է մեզ նախընթացից, ժառանգների վրայ պարտա-
ւորութիւն կայ խնամքէն մինչեւ մահ յորդր հաշ-
մարին: Ֆիզիկական ու մտաւորական անկեանքներն

Ի վերջոյ ուշագրութեան արժանի է մի
հետաքրքիր երեւոյթ, որ տեղի է ունենում ժա-
ռանգութեան բաժանման ժամանակ ըստ Միխի-
թար Գօշի, եւ որպիսի երեւոյթ տակաւին մինչեւ
օրս գոյութիւն ունի հայ նահապետական գեր-
դաստաններում ըստ սովորութեան իրաւունքի
դա մերթափ — մերթափ հարց է — կրտսեր ու
անդրանիկ զաւակների արտօնեալ իրաւունքները
ժառանգական գոյքի մէջ: Եւս առաւել ուշա-
գրու է այս երեւոյթը, որովհետեւ նա գոյու-
թիւն է ունեցել շատ ժողովրդների սովորութե-
ան իրաւունքի մէջ՝ հնդկների, գերմանացի-
ների, ռուսների, օսերի եւ այլն: Հայ դատաստա-
նագրերից երեւում է, որ անդրանիկ՝ աւագ որ-
դին՝ համեմատաբար մնացեալ ժառանգների հետ
օժտուած է առանձնաշնորհմանով. «Իսկ ան-
դրանիկան պատիւ լցի, ըստ այդմ, եթէ հաւա-
սար բաժանիցի ժառանգութիւնն որդւոց, առա-
ւել լցի յաղաքս պատուոյ» (II, գլ. 9, 2), կամ
«այլ զսկզբն պատուիցն զորդւոց... եւ առաւել
տալ ի ժառանգութեանն» (II, գլ. 10, 2): Նմա-
նակ է եւ կրտսեր որդին ստանում է բաժա-
նուելիք ժառանգութեան մէջ հօրական տունը
(II, գլ. 9, 2):

Ինչով բացատրել այդ երկու տեսակ զա-
ւակների առաւելութիւնները ժառանգական ի-
րաւունքի մէջ: Միխիթար Գօշը, հիմնուելով ի
հարկ է քրիստոնէական կրօնի վրայ, տալիս է
իրեն համեմատ բացաղբութիւն. «Ըստ որում
եւ Տէրն պատուիրեաց տալ զառաջին ծնունդն»
(II, գլ. 10, 2): Անդրանիկան այդ «պատիւը», նմա-
նակ է եւ կրտսերի հօրական տուն ստանալը,
պետք է բացատրել այլ կերպ: Գրա բացատրու-
թեան հիմքը հարկաւոր է գտնել այն ընտանե-
կան կազմի մէջ, որ յատուկ էր հայ ժողովուր-
դին, այն է գերդաստանի նահապետական կազմն
ու համայնական կեանքը: Ինչպէս յայտնի է հայ,
նշյալէս եւ այլ ժողովուրդների, սովորութեան
իրաւունքից, նահապետականը նստանիքում տան-

տիրող մահուամբ սրա իրաւունքներն անցնում
են ipso iure մեծ որդուն, որը լիազօր տէր է լի-
նում ընտանեկան կառավարութեան մէջ: Մեծ
որդու այդ առանձնաշնորհ զիրքը անշուշտ պահ-
պանւում էր նմանակ է եւ այն դէպքերում,
երբ ընտանիքը կազմալուծ էր լինում ու բաժան-
ւում հօր մահուամբ: Ուստի մեծ որդին, իրեն
պապական «օջախի» յարստութեան պատա-
րանատու ժառանգը եւ նահապետական գեր-
դաստանի տէրը, որ ամենից շատ է աշխատել
ընտանիքի բարօրութեան համար եւ որը այնքան
մեծ իրաւունքներով էր օժտուելու, ըստ այնմ
եւս պէտք է աւելորդ որեւէ մաս ստանայ ժա-
ռանգութեանից, պէտք է առաւելութիւն ունե-
նայ բաժանուելիք ընչքի մէջ: Նշյալ այդ նահա-
պետական ընտանեկան կազմի գոյութեան կա-
րելի է բացատրել նաեւ կրտսերի առանձնաշնորհ
զրու թիւնն ժառանգութեան մէջ: Նա ստանում
է հօրական տունը, ուր գտնւում էր օջախը, որ
այնքան սուրբ է ժողովրդի աչքում. այն տունը,
ուր երկար ժամանակ տարածւում էր «տան
մեծի» լիազօր իրաւունքն, հնչւում էին նրա հրա-
մանները: Միջօրատի ետեմէնը կարելի է բա-
ցատրել այսպէս: Նահապետական ընտանիքի
կազմալուծ լինելու դէպքերում, երբ դա տեղի է
ունենում նոյն իսկ հօր կենդանութեան ժամա-
նակ, հայրը պարտաւորուած է լինում ընդհա-
նուր գոյքից որոշ մասն տալ հեռացող մեծ որ-
դուն: Այդպիսով մեծ որդին զրկւում է այն
զիրքից, որ մինչեւ այդ օրը նա վայելում էր
ընտանեկան ընդհանուր գոյքը հարստացնելու
եւ ընդհանուր աշխատանքում մասնակցելու
պարտաւորութեան մէջ: «Նրա տեղն այժմ
բռնում է կրտսեր որդին, որ աւելի երկար ժա-
մանակ է մնում իւր հօր մաս անբաժան ու հե-
տեւանակն աւելի է նպաստում իւր գործակալու-
թեամբ հօրական կարողութեան հարստացնելուն
համեմատաբար անդրանիկի որդու հետ: Արդ
միանգամայն պարզ է թուում կրտսերի առանձ-
նաշնորհ իրաւունքն հօրական գոյքի ժառանգե-
լուն մէջ, այստեղից էլ մասնաւորապէս առաջա-
նում է եւ այն կարգը, որ նա ինչպէս տնաւորի,
ժառանգում է հօրական տունը: Անդրանիկը
արդէն վաղուց կառուցել է իւր սեփական օճախը
եւ բնաւ կարիք չունի ժառանգութեան մէջ թո-
ղած հօրական տանը:»¹

1 М. Ковалевскій, Современный обычай и древній законъ, т. I, стр. 334.

(Հարստութիւն)

70. ՄԱՄՈՒՆԵԼԵՆՍ

1 Zachariae, Geschichte des griechisch-römischen Rechts. 1892. 4p. 139—140.